ՀԱՅ ՄԵԾ ԵՐԳԻՉԱԲԱՆԸ

(Հակոբ Պարոնյանի մահվան 100-ամյակի առթիվ)

Գ. Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

1

Պարոնյանը բարձրացավ ժողովրդի ընդերքից։ Նրան կյանքի կոչեց ժամանակը։ Ապագա երգիծաբանը աչք բացեց արևմտահայ կյանքի փոթորկոտ փուլում և հենց սկզբից հաղորդակից եղավ իրականության մեջ գործող գաղափարական հոսանքների միջև ծավալվող բուռն պայքարին։ Տակավին երիտասարդ Պարոնյանը կողմնորոշվեց դեպի դեմոկրատական հոսանքը և կանգնեց պայքարի առաջին գծում։ Դրանում վճռական դեր խաղաց Նալբանդյանի գաղափարակից ու մարտակից ընկեր Հ. Սրվանձյանը, որի անմիջական ազդեցությամբ «Մեղուի» էջերում Պարոնյանը ձևավորվեց որպես մարտնչող հրապարակախոս երգիծաբան։ Այստեղ է, որ բացահայտվեցին կյանքի, ժամանակի հետ ունեցած նրա սերտ կապը, օրվա հրատապ հարցերին միջամտելու նրա ակտիվությունը, համարձակ ոգին, սրամտությունը, որոնք այնուհետև դարձան Պարոնյանի անհատականության բնորոշ գծերը։

Օժտված լինելով լրագրողի խառնվածքով ու փայլուն տվյալներով, Պարոնյանը այդ և հետագա տարիներին խմբագրեց ու հրատարակեց մի քանի պարբերականներ («Մեղու», «Թատրոն», «Թատրոն բարեկամ մանկանց», «Ծիծաղ», «Խիկար» և այլն), որոնք իրենց բովանդակությամբ ու խաղացած դերով կարևոր տեղ են գրավում հայ մամուլի պատմության մեջ։ Դրանց էջերում տպագրած իր ֆելիետոններով, երգիծական մանրապատումներով ու հրապարակախոսական հոդվածներով Պարոնյանը ձեռք բերեց որոտընդոստ հռչակ որպես ժողովրդի շահերի համոզված պաշտպան։

Ժողովրդական զայրույթի ու ցասման հարազատ արտահայտիչ էր Պարոնյանը, որի շուրջը հետզհետե խտանում էր հալածանքի մթնոլորտը։ Բավական է ասել, որ արևմտահայ կյանքում այնքան կարևոր դեր խաղացած «Թատրոն» երգիծաթերթը չորս տարվա ընթացքում փակվեց ութ անգամ։ Եվ չնայած դրան, խմբագիրը երբեք չթուլացրեց իր նախաձեռնող ու պայքարող ոգին, չխոնարհվեց բթամիտ մեծատունների և նրանց գաղափարախոսների առաջ։ Այդ է, որ կատաղեցնում էր Պարոնյանի հակառակորդներին, որոնք ատելությունից մղված ամեն կերպ աշխատում էին խափանել նրա խմբագրած պարբերականները, փականք դնել նրա խայթող լեզվին։ Բայց հրապարակախոս-երգիծաբանը երբեք չընկճվեց և մանավանդ չլռեց։ Նա գտնում էր, որ «...լեզու ունենալ և ժողովրդյան իրավանց պաշտպանությանը համար չխոսիլը համր ու վասակ ըլլալ է»[1]։

Այդ գիտակցությամբ էլ Պարոնյանը ոչ միայն շարունակեց իր հրապարակախոսությունը, այլև ոտք դրեց թատերգության ասպարեզ, նպատակ ունենալով թատրոնը ծառայեցնել ժողովրդի շահերին։

---

[1] Հ. Պարոնյան. Երկերի ժողովածու (տասը հատորով). Երևան, 1962—1979, հ. VIII, էջ 356 (այսուհետև համապատասխան հատորն ու էջը կնշվեն տողամիջում)։

Որպես թատերագիր Պարոնյանը իսկական նորարար էր։ Արդեն իր առաջին տպագրված երկով՝ «Ատամնաբույժն արևելյան» պիեսով (1868) նա նոր խոսք ասաց մեր թատրոնի ու թատերգության բնագավառում։ Արձագանքելով Նալբանդյանի թատերագիտական հայացքներին՝ Պարոնյանը սկզբնավորեց արդիական կյանքը ճշմարտացիորեն արտացոլող, սոցիալական շեշտ ունեցող կատակերգությունը արևմտահայ հատվածում։ Սունդուկյանի հետ միասին նա դարձավ հայ ռեալիստական թատրոնի և թատերգության հիմնադիրը։

Արծարծելով արտաքուստ անմեղ թվացող ընտանեկան-կենցաղային հարցեր՝ Պարոնյանն իր կատակերգություններում («Երկու տերով ծառա մը», «Շողոքորթն», «Պաղտասար աղբար») հասավ սոցիալական այնպիսի լայն ընդհանրացումների, որոնց միջոցով բացահայտեց տիրող հասարակարգի բարոյական սնանկությունը, բարքերի այլասերումը։ Այդ տեսակետից բարձրարժեք գործ է հատկապես «Պաղտասար աղբարը», որը ո՛չ միայն հեղինակի թատերգության գլուխգործոցն է, այլև համաշխարհային դրամատուրգիայի մեջ կատակերգական ժանրի գոհարներից մեկը։ Այն վաղուց ի վեր հաստատուն տեղ է նվաճել հայ թատրոնի խաղացանկում, դաստիարակելով հանդիսականների ու բեմի արվեստագետների սերունդներ։ Եվ դա շնորհիվ այն բանի, որ այդ կատակերգությունը ձևի ու բովանդակության զարմանալի հյուսվածք է, ուշքի է ընկնում կառուցվածքի պարզությամբ, գործողության հարստությամբ և երկխոսության աշխուժությամբ։ Պարոնյանը այստեղ սուր ծաղրի է ենթարկել կեղծիքի ու մերկ շահի վրա հյուսված ամուսնարնտանեկան հարաբերությունների ողջ այլանդակությունը և արդարության պահպանման կոչված մարդկանց պատեհապաշտությունն ու կաշառակերությունը։

Ճիշտ է, կատակերգության առանցքը Պաղտասարի ընտանեկան խնդիրն է, բայց այն հեղինակի համար առիթ է ցուցադրելու տիրող բարքերի ապականվածությունը, այլև վարչական մարմինների նենգվածությունը։ Եթե Անուշի և նրա սիրեկան Կիպարի սատիրական բնութագրմամբ Պարոնյանը մերկացրել է «գարուս լուսավորության ոգին ըմբռնած» մարդկանց բարոյազրկությունը, ապա փաստաբան Օգսենի և դատաստանական խորհրդի անդամների կերպարներով բացահայտված են՝ տիրող «արդարադատության» ներկայացուցիչների անսկզբունքայնությունն ու շահամոլությունը։ Այդ բանը լավ է հասկացել Կիպարը, որը Անուշին հուսադրելու համար ասում է. «Նախապես անոնց յուրաքանչյուրի հետ մասնավոր տեսակցություն ունեցա և խոստացա գոհ ընել զիրենք» (I, 402)։

Դժվար չէ հետևցնել, որ «խոստացածը» կաշառք է, որը և ընթացք է տալիս դատական գործին, արդարացնելով Անուշին ու Կիպարին և մեղապարտ ճանաչելով Պաղտասարին։ Վերջինս անկարող լինելով հասնել արդարության, վերջիվերջո ստիպված է լինում եղելությունը համարել «թյուրատեսություն», ներել անհավատարիմ կնոջը և նոր ելք որոնել նրանից ազատվելու համար։ Ու թեև վարագույրն իջնում է, բայց կատակերգությունը շարունակվում է կյանքում։ Ահա, թե ինչպիսի՜ վարպետությամբ է կառուցված այս պիեսը, որի անբռնազբոս ծաղրն ու ծիծաղը մեզ պատճառում է գեղարվեստական հաճույք։

Հենց դրանումն է Պարոնյանի երգիծանքի ուժը, որ դրսևորվել է ինչպես հրապարակախոսության ու թատերգության մեջ, այնպես էլ երգիծական դիմանկարի, վիպակի, նովելի, օրագրության, ֆելիետոնի և այլ ժանրատեսակներում։ Նա կատարելապես տիրապետում էր երգիծանքի ամենատարբեր ձևերին ու տեսակներին և այդ ամենը հմտորեն ի սպաս էր դնում ժողովրդի սոցիալ-քաղաքական պայքարին։

Լինելով հայ սոցիալական երգիծանքի սկզբնավորողը՝ Պարոնյանը քայլել է իր ժամանակի հետ և արտացոլել իրականության բնորոշ երևույթները։ Դրա առավել ցայտուն արտահայտություններից է «Ազգային ջոջեր» դիմա-

նկարների շարքը, որն իր հղացման ինքնատիպությամբ ու գեղարվեստական ընդհանրացումների խորությամբ պատվավոր տեղ է գրավում համաշխարհային երգիծական գրականության մեջ։ Պարոնյանն այստեղ սատիրական ծաղրով պատկերել է իրեն ժամանակակից հասարակական տարբեր խավերի ներկայացուցիչների, բացահայտելով նրանցից յուրաքանչյուրի վարքն ու բարքը, «ազգային գործունեության» շարժառիթներն ու բնույթը։ Իր իսկ խոստովանությամբ «մեր ազգին մեջ գտնված երևելի անձերուն կենսագրություններն ընելով՝ անոնց թերությունները» (II, 7) ցուցադրելով անաչառությամբ, Պարոնյանը ընթերցողին հանգեցնում է այն հետևության, թե ո՛վքեր են տնօրինում ժողովրդի ճակատագիրը, շաղակրատում ազգի անունից և ի՛նչով են զբաղված։ Նա ծաղրում և դատապարտում է իր նկարագրած անձերի խոսքի ու գործի հակասությունը, տիրողների հանդեպ ունեցած ստորաքարշությունը։ Ըստ որում օգտագործելով նրանց կյանքի իրական փաստերը, կենսագրության հավաստի տվյալները՝ երգիծաբանն անխնա մերկացնում է տվյալ սոցիալական խավի հասարակական վարքագիծը։

Պարոնյանի գրիչն առանձնապես անողոք է հայ պահպանողական և լիբերալ հոսանքների նկատմամբ։ Այսպես, Խ. Գալֆայանի, Հովհ. Ջամուրճյանի, Ա. Հասունյանի դիմանկարներով սրամտորեն բացահայտված է կղերապահպանողական հոսանքի հետադիմական էությունը։ Ունենալով ընդհանուր գծեր՝ նշված «ջոջերը», սակայն, միմյանցից տարբերվում են իրենց անհատական նկարագրով։

Ահա, օրինակ, Գալֆայանը, որ Պարոնյանի գրչի տակ բնութագրվել է որպես բռնահանգ ու բռնավանկ չսփածո խոսքի հեղինակ, կնոջ նման պըճնասեր, շահամոլ։ Ծաղրված են Գալֆայանի կեղծ բարեպաշտությունը, փառամոլությունը, հասարակական դիրքորոշումը։ Երգիծաբանը մտրակել է նաև բազմանուն հոգևոր գործչի անակզբունքայնությունը։ «...Ձուր կարծիքներուն հետ ալ այնպես կը վարվի, ինչպես յուր մականուններուն հետ, միայն սա տարբերությամբ, որ կարծիքներն ինն օրը անգամ մը կը փոխե, մինչդեռ մականունները ինը տարին անգամ մը» (II, 15)։

Նույնպիսի ցասմամբ Պարոնյանը դիմակազերծ է արել Ջամուրճյանին։ Ինչպես նախորդ, այնպես էլ սույն երգիծական դիմանկարը կերտելիս նա հետևել է Նալբանդյանի քննադատությանը։ Կարելի է ասել, որ վերջինիս անմիջական ազդեցությամբ է, որ երգիծաբանը ծաղրել է թե՛ մեկին և թե՛ մյուսին։ Շեշտված է Ջամուրճյանի կղերամտությունը, խավարամոլությունը. «Ամեն ճիգ կը թափեր դևերու գոյությունն հաստատել յուր գոյությամբ» (II, 45),— գրել է Պարոնյանը և ավելացրել. «Երբ հայ թերթ մը վատաքեր քիչ մը լույս վառել, Պատվելին կուգար, կը փչեր զայն» (II, 47)։ Պապական կողմնորոշման տեր Ջամուրճյանը ներկայացված է որպես լուսավորության թշնամի, թուրքական բռնապետության կամակատար, որին ամիրաները «կը քաջալերեին ոսկիներով, զորս անձնվիրաբար կառներ Պատվելին» (II, 49)։

Նույնքան և գուցե ավելի արգահատելի դեմք է Ա. Հասունյանը, մեկը հռովմեական այն հայերից, որոնք «նախապատիվ կը սեպեն իրենց ազգային իրավունքներն ս. պապին հողաթափներուն մեջ տեսնել, քան թե իրենց ձեռներուն մեջ» (II, 106)։ Լինելով կաթոլիկների համայնքի պարագլուխ՝ Հասունյանը քայքայիչ աշխատանք էր կատարում ազգային կյանքում, խորացնելով դավանաբանական վեճերն ու երկպառակությունը։ Փառամոլ ու իշխանատենչ, ազատագրական շարժման հակառակորդ, աղդադավ,— այսպիսին է Հասունյանը, որի դիմակը պատռելով՝ Պարոնյանը գրել է. «Ձեր գործերն բավական են ապացուցանել, թե հայու զավակ չէ...» (II, 107)։

Պարոնյանի սատիրայի սլաքներն ուղղված են նաև հայ լիբերալիզմի դեմ. նա ծաղրի է ենթարկել բուրժուական մամուլն ու հրապարակախոսությունը, մտրակելով նրանց ներկայացուցիչների նյութապաշտությունը, իրական կյանքից կտրված լինելը, ազգային ռոմանտիզմը։

Առանձնապես բացասական է Պարոնյանի վերաբերմունքը պոլսահայ

այն խմբագիրների նկատմամբ, որոնք «...իրենց թերթերը միմիայն իրենց շահուց աղբյուր բռնելով՝ ... կը ծածկեն ճշմարտություն մը, երբ այն ժողովրդյան օգտակար է, իսկ իրենց վնասակար» (II, 225)։ Նա ցույց է տվել այդ կարգի խմբագիրների պատեհապաշտությունը, շողոքորթությունը տիրողների առաջ, ծաղրել է լեզվի մաքրամոլությունը («...այն լուրերն, որոնց մեջ խորթ բառեր կը գտնվեին, բնավ չէին հրատարակվեր, որքան էլ օգտակար ըլլային յուր ընթերցողներուն»)։

Պարոնյանը խստագույն քննադատության է ենթարկել ամիրայությանը, որն ինչպես հայտնի է, տիրապետող դիրք էր գրավել հայ ազգային կյանքում։ Նա ցույց է տվել, որ ամիրաները ժողովրդին խորթացած, անձնական բարեկեցության հետամուտ եսամոլներ են, որոնք «իրենց ձիերուն համար հոյակապ ախոռներ կառուցանելեն ետքը իրենց զավակներուն համար դրպրոց մը շինելու դաղափարն հղացան» (II, 11)։ Բարձր պաշտոնների հասնելու համար պատրաստ են զոհաբերել ժողովրդի ազգային շահերը, նրա արժանապատվությունն ու լեզուն։ Դրանք այնպիսի պաշտոնամոլներ են, որոնք «եթե աստիճանի մը բարձրանան՝ հայերեն չխոսելու ուխտ կ'ընեն, եթե պատվանշան մ'ալ առնեն՝ հայերեն խոսողն ականջեն պատի մը վրա գամելու շափ հառաջ կերթան, և եթե քիչ մ'ալ բարձրանան՝ ազգային իրավունքներն աճուրդի կը հանեն...» (II, 232)։

Լինելով վարպետ երգիծաբան՝ Պարոնյանը կարողացել է հումորի և սատիրայի տարբեր ձևերն օգտագործել նյութին համապատասխան, դրսևորելով իր վերաբերմունքը կոնկրետ երևույթի նկատմամբ։

Դա երևում է նաև «Մեծապատիվ մուրացկաններ» վիպակից, որը հեղինակի ծավալուն գործերից է և նշանակալի քայլ արևմտահայ վիպագրության զարգացման ճանապարհին։ Եվ դա ամենից առաջ այն պատճառով, որ այդ վիպակը հատկանշվում է երևույթների ճշմարտացի արտացոլմամբ, կերպարների գեղարվեստական կոնկրետությամբ։ Առաջին իսկ էջերից ծաղրելով ռոմանտիկ-սարկածային երկերի հեղինակներին, որոնք իրենց գրվածքները «հետաքրքրական» դարձնելու համար դիմում են խորհրդավոր նկարագրությունների ու նյութի հետ կապ չունեցող շեղումների, Պարոնյանը շարադրանքը սկսում է պարզությամբ։ Ուշագրավ է նաև, որ հեղինակի խոստովանությամբ նկարագրված անցքը «ժամանակակից դեպք մ'է» (III, 7)։

Եվ արդարև, նյութ առնելով ժամանակակից կյանքից՝ Պարոնյանը սուր դիտողությամբ կարողացել է ճշմարտացիորեն բացահայտել անցյալ դարի երկրորդ կեսի պալատահայ իրականության բազմազան կողմեր։ Վիպակում պատկերված են հասարակական տարբեր խավերի՝ առևտրավաշխառուական դասի, մտավորականության, աշխատավորության ներկայացուցիչներ, որոնցից յուրաքանչյուրի կերպարը մարմնավորում է տվյալ խավին բնորոշ գծեր։

Այդ առումով առավել խոր ընդհանրացում է Աբիսողոմ աղայի կերպարը, որը կենտրոնական տեղ է գրավում շարադրանքում։ Ամուսնանալու նպատակով Տրապիզոնից Պոլիս եկած այս վաճառականը Պարոնյանի գրչի տակ ստացել է բազմակողմանի բնութագիր։ Նրա ծիծաղաշարժ արտաքինը, ապուշային նայվածքը, գռեհիկ ճաշակը, նյութապաշտությունը. «պատվավոր ազգային մը» երևալու փառամոլությունը, տգիտությունն ու եսամոլությունը ցուցադրված են կոնկրետ գործողության և կոմիկական հանգամանքների մեջ։ Հեղինակին հաջողվել է ստեղծել այնպիսի տիպական դրություններ, որոնցում տեսանելի են դառնում գավառական վաճառականի բնավորությունը և հոգեբանությունը, նրա բացասական էությունը։

Նկարագրվող կյանքի համար նույնքան բնորոշ կերպար է Մանուկ աղան։ Մայրաքաղաքում ունենալով ծանոթության լայն շրջան՝ նա իր կապերն օգտագործում է անձնական շահերի համար։ Մերկ շահի տեսանկյունից է նայում նույնիսկ իր՝ իբրև թաղական խորհրդի անդամի պարտականությանը։ Եվ չթաքցնելով այդ՝ Մանուկ աղան խոստովանում է, որ քվե է տալիս նը-

բան, ով իրեն հյուրասիրում է։ Այն էլ հետաքրքրական է, որ խոսելով մեկի մասին, որ «անոթությունե պիտի մեռներ» ասում է. «Վերջեն թաղական անդամ ընտրվեցավ և... ինքզինքը ժողովեց» (III, 39)։ Ցնայած առաջացած տարիքին, վերին աստիճանի շարժուն ու արագախոս անձնավորություն է, որը կնոջ ասելով՝ «առտըվնե մինչև իրիկուն սրճարանները կերթա, կը նստի, ազգային գործերու վրա կը խոսի...» (III, 18)։

Վիպակում առավել ցայտուն պատկերացում է գտել «մեծապատիվ մուրացկանների» մի ամբողջ շարք «ոչ այնքան մեղադրելու նպատակով», ինչպես ասում է հեղինակը, «որքան ներկայացնելու համար ապագա սերընդյան՝ ժամանակիս գրական մարգոց ողբալի կացությունը...» (III, 101)։

Եվ իրոք, դրանք բոլորն էլ կարոտ են փողի և մի քանի գրոշ կորզելու համար ստիպված շողոքորթում են եկվոր վաճառականին, փառաբանում նրան։ Նրանց բնորոշ մյուս հատկանիշը խոսելացավն է, շատախոսությունը, որ նույնպես տաղտուկ կյանքի արդյունք է։

Այս ընդհանուր գծերի հետ միասին «մուրացկաններից» յուրաքանչյուրը անհատականացված տիպ է և ունի կոնկրետ նկարագիր, որը չի կարելի շփոթել ոչ մեկի հետ։ Այսպես, առաջին մարդը, որ դեռ նավահանգստում դիմավորում է Աբիսողոմ աղային, խմբագիրն է՝ «բարձրահասակ, թիաղեմ, փոքր աչերով մարդ մը ուսերը տնկած, ձեռները շփելով և բռնազբոսյալ ժպիտով մը ...» (III, 9)։ Առաջին իսկ պահից խմբագիրը դրսևորում է իր բարոյական թշվառությունը, քծնում Աբիսողոմ աղային, բնութագրելով նրան որպես «պատվական ազգային մը, շնորհալի երիտասարդ մը ... վեհանձն հոգի մը... հայրենասեր անձ մը...»։

Այնուհետև Աբիսողոմ աղային մեկը մյուսի հետևից ներկայանում են կեղծապարիշտ քահանան, անմուսա բանաստեղծը, թեթևամիտ լուսանկարիչը, փողապաշտ միջնորդ կինը, «երևելի ազգային հիվանդ» որոնող բժիշկը, աղքատ ու արհամարհված ուսուցիչը, «դատերու» սիրահար փաստաբանը, թշվառ դերասանը, ազգային սափրիչը... Սրանցից յուրաքանչյուրը ներկայացնում է կյանքի որևէ պատկեր և ունի տիպական գծեր։ Դրան զգալապես նպաստել է այն հանգամանքը, որ երգիծաբանը կարողացել է ստեղծել այնպիսի ծիծաղելի դրություններ, որոնցում բացահայտվում է ոչ միայն ազգային մեծատունի (Աբիսողոմ աղայի) անտարբերությունն ու ամբարհանքը «մեծապատիվ մուրացկանների» հանդեպ, այլև սրանց «ողբալի կացությունը»։ Այնքան կենդանի ու տպավորիչ են «մուրացկանները», որ թվում է, թե կյանքից են մտել գրականության մեջ. մենք տեսնում ենք յուրաքանչյուր անձի նկարագիրը, շարժումները, լսում ամեն մեկի խոսվածքն ու հուսահատ հոգու ճիչը։

Նույնքան անմոռաց տպավորություն են թողնում բեռնակիրները, որոնցով հեղինակը ներկայացրել է աշխատավորական խավը։ Դրանք պանդուխտ գյուղացիներ են՝ ազնիվ ու վեհանձն, բարձր բարոյականության տեր մարդիկ, որ ապրում են սեփական քրտինքով։ Նավահանգստում համարձակորեն մոտենում են Աբիսողոմ աղային և իմանալով, թե որ փողոցը պիտի գնա, վերցնում են նրա սնդուկները և արագ ու ապահով հասցնում տեղ. «...մինչդեռ ես շատ ատենաբաններ մտիկ ըրած եմ,— սրամտում է Պարոնյանը,—որ յութը ութը ժամ շարունակ խոսելով չեն կարողացած իրենց փնտրած փողոցը գտնել» (III, 15—16)։ Մանուկ աղայի կնոջ հետ ունեցած խոսակցության ընթացքում բեռնակիրները դրսևորում են պարզամտություն, հաստատակամություն և արժանապատվության զգացում։ Նրանց խորթ են նվնվոցն ու դատարկախոսությունը, խոսակցին դուր գալն ու շողոքորթելը։ Նույնիսկ այն ժամանակ, երբ տանտիրուհին հայտնում է, թե «վաղը եկեք» վարձը ստանալու, բեռնակիրները լռելյայն հեռանում են, առանց որևէ դժգոհության, որովհետև «վաղը բառն ամեն օր լսելու վարժված էին» (III, 18)։ Ակնհայտ է հեղինակի համակրանքն ու սերը այս աղքատ, հասարակ, բայց հոգեպես հարուստ մարդկանց նկատմամբ։

2

Սոցիալական երգիծանքը Պարոնյանի մոտ հաճախ սերտաճում է քաղաքական սատիրային: Ինչի մասին էլ գրել է նա՝ կենցաղային, թե հասարակական երևույթների, միևնույն է, բոլոր դեպքերում էլ բացահայտում է դրանց քաղաքական իմաստը և հանգում նոր ու անսպասելի հետևություններին։

Պարոնյանի քաղաքական սատիրան իր սուր ծայրով ուղղված է ժողովրդին ճնշող ամեն դույնի կեղեքիչների ու բռնակալների դեմ։ Նրա ծաղրի մտրակը շեշտակի հարվածներ է հասցրել ազատագրական շարժման հակառակորդներին, որոնք փորձում էին հնազանդության ու ստրկության մեջ պահել մասսաներին։

Պարոնյանի քաղաքական սատիրան նոր թափ առավ անցյալ դարի 70-ական թթ. վերջերին, երբ հրապարակի վրա դրվեց Հայկական հարցը։ Վերջինս, որ սերտորեն կապված էր Արևելյան հարցի հետ, դարձավ միջազգային դիվանագիտական խաղերի առարկա։ Եվ տեղին է նշել, որ մեր երգիծաբանը զարմանալի խորաթափանցությամբ տեսավ ու մերկացրեց մեծ տերությունների դիվանագիտական քայլերի խորամանկ ու հակահայկական բնույթը։ Այդ իմաստով հատկապես տպավորիչ են «Կոմիթներ» և «Հոսհոսի ձեռատետրը» երկերը, որոնք իրավամբ համարվում են հեղինակի քաղաքական սատիրայի լավագույն արտահայտությունները։ Դրանց մեջ Պարոնյանը ճշմարտացիորեն բացահայտել է ռուս-թուրքական պատերազմի և հետագա տարիների իրադարձությունների իմաստը, հստակորեն մեկնաբանել կատարվող երևույթները և ճիշտ կողմնորոշել ընթերցողին։

Որպես հայ դեմոկրատիայի մարտնչող երգիծաբան Պարոնյանը, ինչպես և պետք էր սպասել, կրակի տակ է առել սուլթանական Թուրքիայի ներքին ու արտաքին քաղաքականությունը, բացահայտել նրա հակաժողովրդական էությունը։

Չնայած օսմանյան գրաքննության հետզհետե սաստկացող խստություններին, որոնց պատճառով հաճախ խափանվում էին իր հրատարակած պարբերականները, Պարոնյանը, սակայն, երբեք չընկճվեց։ Նա անվհատ հոգով շարունակեց խարազանել սուլթանական ռեժիմը, որը ծանր կացություն էր ստեղծել երկրի քրիստոնյա ժողովուրդների, այդ թվում և հայերի համար։ Երգիծաբանը բազմիցս ցույց է տվել թուրքական կառավարության դաժանությունը արևմտահայության նկատմամբ, չխամրող գույներով պատկերել պետական պաշտոնյաների գործած խժդժությունները, որոնց զոհ էին դառնում հաղարավոր անմեղ մարդիկ։ Տակավին 1875 թ. նոյեմբերին Պարոնյանը խոր վշտով գրել է. «Հայաստանեն հասած լուրերն վերջապես կը հայտնեն, թե հարստահարությունը Մշո կուսակալ կարգված է, թե՝ հարստահարությունն է Մուշը կառավարողը» (X, 67)։ Խոսելով նույն գավառում տիրող դրության մասին՝ նա հավաստել է. «Չկա հոն ո՛չ ստացվածքի ապահովություն, ո՛չ կենաց ու ո՛չ ալ պատվո երաշխավորություն, այլ կա հոն հափշտակություն, մարդասպանություն, պատվո բռնաբարում...» (նշ. տ.)։

Իրապաշտ գրչով արձանագրված այս տողերը բացահայտում են այն ծանր ու անտանելի պայմանները, որոնցում գտնվում էին արևմտահայերը։ Երգիծաբանի վկայությամբ նրանք ոչ թե հպատակության, այլ գերության լծի տակ էին, դատապարտված «միայն տուրք վճարելու և հարստահարվելու» (X, 68—69)։ Պարոնյանը ցույց է տալիս, որ հպատակ քրիստոնյա ժողովուրդները չունեն գույքի ու կյանքի ապահովություն, խղճի ու խոսքի ազատություն։ Ավելին, «թուրքերը մեծ ցավ կզգան՝ երբ հայերը հարստահարութենե փրկվին» (IV, 393).— ասում է երգիծաբանը և շեշտում երկրում տիրող ազգային խտրականությունը, ճնշումն ու հալածանքը, որոնց ենթարկվում էին հայերը։ «Աս ի՞նչ անիրավություն է,— գրել է Պարոնյանը,— հավասարություն կ՚ըսեն և խտրությունը չեն վերցներ» (IV, 274)։ Երկրում սավառ-

նում է սուլթանի հայահալած կամքը. «Վա՜յ անոնց, որ կը հանդգնին Հայաստան բառն արտասանել» (VI, 447)։ Թուրք կառավարությունը հայ դրավաճառների խանութներից հավաքել է հայոց Լևոն վեցերորդ Լուսինյան թագավորի լուսանկարները և «կըսվի թե զանոնք հրացանի պիտի բռնել տա...» (IV, 460), «Ամեն օր կը ձերբակալվին և կը բանտարկվին Հայկա և Վարդանա պատկերներն» (IV, 475) և այլն։

Սրանք փաստեր են, որ ցուցադրում են Թուրքիայում ապրող հայերի ծանր կացությունը և միաժամանակ երկրում տիրող կամայականությունը։ «Թուրքիո մեջ բան մը ընել անկարելի է... Թուրքիո մեջ ամեն բան կարելի է» (IV, 379),— ասում է Պարոնյանը և դա հաստատում նոր տվյալներով։

Հայտնի է, որ 1876 թ. թուրք ելուզակները հարձակվում են Վանի հայերի վրա, թալանում բոլոր խանութները, սպանում մարդկանց։ Եվ այդ ավերածությունները թուրքական մամուլը ներկայացնում է որպես հրդեհի արդյունք։ Այդ առթիվ Պարոնյանը գրել է. «Իմացա՞ք սա բարբարոս կրակին Վանա մեջ գործած անիրավությունները, ամբողջ շուկան մոխիր դառնալնելն ետքը շատ մը ապրանքները առեր փախեր է ... Բայց ինչ որ ալ ըլլա, վստահ եմ, որ Վանա բարեխնամ կառավարությունը ասոնց չարաբարո հրակները պիտի ձերբակալե ... ձեռքով ալ չբռնվիր, որ ձերբակալե» (IV, 118—119)։

Անցողակիորեն նկատենք, որ այստեղ, ինչպես և այլուր, երգիծաբանը «բարեխնամ» ածականը գործածում է հեգնանքով, հակառակ իմաստ դնելով նրա մեջ, դրանով իսկ ավելի ընդգծելով թուրք կառավարության հակամարդկային վերաբերմունքը իր հպատակների նկատմամբ։ Դրա ցնցող արտահայտություններից է այն դեպքը, որ պատմում է Պարոնյանը. ցույց տալով, թե ինչպես խղճի ու դավանանքի ազատություն հռչակած երկրում մոլեգնում է անիշխանությունը։ Սեբաստիայում թուրքերը «թմբուկով եկեղեցի կը մտնեն ու պատարագիչ քահանային մորուքը ածիլելով եկեղեցվուն մեջտեղը կը խաղցունեն։ Ահա դեպք մը, որուն հարստահարություն անունը չենք կրնար տալ, որովհետև գործին մեջ ո՛չ դանակոծություն կա, ոչ ալ սպանություն, այլ խնդություն և ցնծություն» (IV, 126)։

Այս և նման փաստերը վկայում են երկրում տիրող բացարձակ անօրինականության, հայերի նկատմամբ սուլթանական կառավարության վարած դաժան քաղաքականության մասին։ «...Հայերը գավառաց մեջ անոթութենե կը մեռնին կոր» (IV, 189), գավառացի ազգայինները «ամեն օր ծեծ կուտեն» (IV, 313), «Հայաստանի մեջ հարստահարությունները կը շարունակվին» (IV, 416) և այլն։ Այսպիսիք են երգիծաբանի դիտած և արձանագրած փաստերը։ «Չեմ կրնար զարմանքս բռնել,— գրել է նա,— երբ կը տեսնեմ, որ սահմանադրության հրատարակվելեն ետքն ալ գավառաց մեջ հարստահարություններ կըլլան...» (IV, 210)։ Դեռ ավելին, «անիրավությունք առաջվնե ավելի կանոնավոր կերպով կը շարունակվին Հայաստանի մեջ» (IV, 311)։

Այսպիսին էր արևմտահայերի վիճակը թուրքական բռնապետության լծի տակ, ուր լայն չափերի էին հասել պետական պաշտոնյաների անկարգություններն ու սանձարձակությունները։ Պարոնյանի խոսքերով ասած՝ թուրք «պաշտոնյաները մեյ մեկ ավազակ լինելով» (IV, 442) կողոպտում էին հայաբնակ գյուղերը, «գավառներու մեջ հարկահանները տուրքերու հավաքման» (IV, 493) ժամանակ գործում էին բարբարոսաբար։ Նույնիսկ թուրք զորամասերը զբաղվում էին թալանով։ Բայց զավեշտականն այն է, որ սուլթանական պաշտոնյաները չէին խորշում կողոպտել նաև միմյանց։ Պարոնյանը պատմում է, որ մի գավառապետ իր պաշտոնատեղին գնալիս ձերբակալվում է ավազակների կողմից։ Վերջիններս «իրենց պաշտոնակիցը մերկացնելով,— շարունակում է երգիծաբանը,— ըսած են անոր. մեզի դեմ միշտ գանգատներ կը գրվին Կ. Պոլիս, իսկ քեզի համար շնորհակալության նա-

մակներ. մինչդեռ դու և մենք միևնույն արհեստը կը գործածենք տարբեր եղանակներով» (IV, 439)։

Թուրք պաշտոնյաների հատկանշական գծերից էր կաշառակերությունը։ Մի առիթով երգիծաբանն ասում է. Թուրքիայում «պաշտոն վարողներն ամենեն առաջ» «ուտեմ» բայն են սովորում (IV, 426)։ Իսկ մի ուրիշ անդամ նա նշում է, որ թուրք լրագիրները պարծանքով հայտարարել են, թե «պայրամի առթիվ պաշտոնյաներուն ամսական պիտի տրվի... ցավալին այն է,— շարունակում է Պարոնյանը,— որ տարին մեկ երկու պայրամ ունին. մյուս ամիսներն ի՞նչ կուտեն պաշտոնյաները։

— Կաշա՜ռք ... մանավանդ Հայաստանի մեջ» (IV, 460)։

Կաշառակերություն, գողություն, վայրագություն,— ահա թուրք պաշտոնյաների վարքի ու գործողության հատկանիշները, որ համարձակորեն մերկացրել է Պարոնյանի սարկաստիկ գրիչը։ Այդ առնչությամբ հատկապես հիշարժան է «Հոսհոսի ձեռատետրը» (1880)։ Օգտվելով Կովկասում («Փորձում») տպագրվելու հնարավորությունից՝ հեղինակը այստեղ կարողացել է համեմատաբար ազատ արտահայտվել իրեն հուզող քաղաքական խնդիրների մասին և հանգել ժխտական հետևության թուրքական բռնակալության հանդեպ։

Իր իսկ խոսքերով ասած՝ «ազգին շանը միայն առաջնորդ առնելով» (X, 662), Պարոնյանը քայլել է ժամանակին համընթաց և հետևողականորեն ծաղրել ու մերկացրել թուրքական պետության ոչ միայն ներքին կյանքը, բիրտ ռեժիմը, այլև արտաքին քաղաքականությունը։ Դրա բնորոշ արտահայտություններից է նաև հետևյալ փաստը. Արևմտյան Հայաստանում պահանջվող բարենորոգումների «անհիմն լինելը» ապացուցելու համար Թուրքիան աշխատում էր կեղծ վիճակագրությամբ ցույց տալ հայերի փոքրամասնությունը նույնիսկ այնպիսի հայաբնակ վայրերում, ինչպիսիք են Վանը, Կարինը, Դիարբեքիրը և այլն։ Երգիծաբանը վճռականորեն ծառանում է այդ կեղծիքի դեմ՝ հայտարարելով, թե նշված քաղաքներում «հայերը 17 տոկոսը կը կազմեն՝ ըսել է թե 53 տոկոսը վերջերս կամ քյուրտերեն սպանված են և կամ այդ վիճակագրությունն ընող պաշտոնյաներեն» (IV, 394)։

Պարոնյանը ոչ մի հույս չուներ, թե թուրք կառավարությունը կարող է բարելավել արևմտահայության վիճակը, հայկական նահանգներում կիրառել բարենորոգումներ։ Եվրոպան խաբելու համար,— ասում էր նա,— թուրք կառավարությունը թեև երբեմն-երբեմն գործածում է բարենորոգում բառը, բայց չպետք է հավատալ, միևնույն է, «բարենորոգում չպիտի ըլլա...» (IV, 400)։ Դրա փոխարեն նա ազատություն է տվել բոլոր տիպի ավազակների «հայերու ստացվածքն, կյանքն և պատիվը բռնաբարելու...» (Ն. տ.)։

Վայելելով մեծ տերությունների հովանավորությունը՝ Թուրքիան անարգել առաջ էր տանում բռնության և ջարդերի քաղաքականությունը, որը խըստորեն դատապարտում է Պարոնյանը։ Հայտնելով, որ բարեբախտաբար բանտարկության լուր չեկավ այսօր Սեբաստիայից, նա գրել է. «Ես կը կարծեմ, թե կուսակալն Սեբաստիո բոլոր հայերը բանտարկած է և, հետևապես դուրսը մարդ չէ մնացած ... Տանկաստանին մեջ բա՜նտ... բանտին մեջ բանտ..» (IV, 476)։

Թուրքիան, հիրավի, ժողովուրդների բանտ է, վայրագության ու ջարդերի երկիր, որտեղ ինչպես երգիծաբանն էր ասում՝ «գավառական իշխանությունները դյուցազնական քաջությամբ կը գործեն միշտ, երբ հարկ ըլլա ձերբակալել անմեղները» (II, 189)։

Եվ ահա այդ անմեղ մարդկանց ու ազգերին սուլթանիզմի ճիրաններից ազատելու համար Պարոնյանի խորին համոզմամբ մի ելք է մնում. վերացնել թուրքական բռնապետությունը։ Նշելով, որ մայրաքաղաքում չկա մի փողոց, որտեղ խանութների ճակատին քաշված չլինի ճերմակ լաթ՝ վրան գրված լիկվիդացիոն բառը, երգիծաբանն առաջարկում է, որ լավագույնը կլիներ այն, որ քաղաքապետարանը հավաքեր այդ լաթերը և «մի մեծ լաթ

կարել տալով՝ նորա վրա ոսկեզօծ տառերով լիքվիտասիոն դներ և այդ լաթը՝ իբրև դրոշակ մայրաքաղաքին դռներուն վրա պարզեր» (IV, 392)։

Թափանցիկ ու խորիմաստ ակնարկ է սա, որ դրսևորում է հումանիստ երգիծաբանի տենչանքը՝ վերացված տեսնել սուլթանական բռնատիրությունը։ Բայց նա գիտակցում էր նաև, որ այդ բռնապետությունն իր գոյությունը պահպանում է շնորհիվ արևմտաեվրոպական տերությունների, որոնք, սակայն, իրենց շահերից մղված, դիմում էին ամեն տեսակի դիվանագիտական խաղերի։

Համարձակորեն կարելի է ասել, որ Պարոնյանը առավել, քան ժամանակակիցներից որևէ մեկ ուրիշը, փայլում էր քաղաքական հոտառությամբ, միջազգային երևույթների մեջ թափանցելու զարմանալի ընդունակությամբ։ Դրա շնորհիվ նա կարողանում էր ճիշտ ընկալել իրադարձությունների ներքին իմաստը և հանգել ճիշտ հետևությունների։

Արտահայտելով հայ ժողովրդի արմատական շահերն ու ձգտումները՝ մեծ երգիծաբանը խիզախորեն ծառանում էր եվրոպական գաղութարարների դեմ, ցույց տալիս նրանց քաղաքական նպատակները՝ Արևելյան հարցի առընչությամբ։ Նա հավաստում էր այն ճշմարտությունը, որ այդ պետություններից ոչ մեկին չի հուզում հայ ժողովրդի ճակատագիրը, որ նրանք դիվանագիտական գործարքներով ձգտում են միայն ազդեցիկ դիրք գրավել Մերձավոր Արևելքում։ Դրա համար էլ նրանցից յուրաքանչյուրը որոնում է դաշնակից և գաղտնի ու բացահայտ նախապատրաստվում պատերազմի։

Բնորոշ է, որ ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին արդեն Պարոնյանը զգում էր, որ թեև ամենուրեք հնչում էին խաղաղության խոսքերը, բայց մեծ տերությունները փաստորեն պատրաստվում էին պատերազմի. «Ըստ մեզ,— գրել է նա 1876 թ. նոյեմբերին,— ամենեն հավանականը սա է, որ այս մարդիկ լեզվով խաղաղությունը պիտի պահեն ու գործքով խաղաղությունը պիտի խանգարեն» (IV, 98)։

Արևմտաեվրոպական պետությունների նենգ քաղաքականությունը ավելի բացահայտ դարձավ պատերազմի տարիներին, երբ նրանք իրենց զավթողական նկրտումները փորձում էին քողարկել քրիստոնյաների դրությունը բարելավելու ծխածածկույթով։ Այդ կեղծիքը քողազերծ անելով՝ Պարոնյանը գրել է. «Դիվանագետներ, թագավորներ, կայսրեր, ամենքը միաբերան «քրիստոնեից վիճակին բարվոքում» կըսեն, ի վերա այսր ամենայնի ես իմ վիճակիս մեջ բարվոքում մը չեմ կրնար կոր տեսնել» (IV, 268)։ Նա շարունակ ընդգծում էր, որ մեծ տերություններին ու նրանց դիվանագետներին հետաքրքրում է մի հարց՝ «որո՞ւ ձեռքը Դարդանելի վրա պիտի մնա» (IV, 282)։

Եվ սա էր մտահոգում Եվրոպայի պետական ու դիվանագիտական այն գործիչներին (Գլադստոն, Գորչակով, Բիկոնսֆիլդ, Բիսմարկ, Իգնատև, Սոլսբերի և այլն), որոնք այս ու այն չափով բնութագրվել են երգիծաբանի գրչի տակ։ Դրանք թեև հանդես էին գալիս քրիստոնյա ժողովուրդների «պաշտպանի» դիմակով, բայց ըստ էության հետապնդում էին նվաճողական նպատակներ։ Դրանց էր ծառայում դիվանագիտությունը, որը Պարոնյանի արտահայտությամբ, եթե «սիրուն կողմ մ'ունի՝ այն ալ յուր լեզուն է։ Իր անուշ ու քաղաքավարական լեզուն մյուս բոլոր թերությունները կը գոցե» (IV, 267)։ Այդ դիվանագիտությունը «քաղաքավարությամբ կըսե. «Սահմանս պիտի շտկեմ քիչ մը», «Տեղս շատ նեղ է», «Սահմանս պիտի ընդարձակեմ», «Սահման, սահման և դարձյալ սահման» (IV, 268)։

Նման «քաղաքավարությամբ» գործող դիվանագետների բուն էությունն է մերկացրել երգիծաբանը, ասելով. «Ասոնք մեր գիտցած ու ճանչցած չաստվածներեն շատ վեր են։ Աստվածներուն կենդանիներ կը զոհեին ասոնց մարդ կը զոհենք ու հարյուր հազարներով կը զոհենք» (IV, 280)։

Պատռելով եվրոպական դիվանագիտության դիմակը՝ Պարոնյանը բա-

ցահայտել է մեծ տերությունների քաղաքականության զավթողական միտումները, մերկացնելով դրանց հակաժողովրդական բնույթը։

Նա առանձնապես կծու լեզվով է արտահայտվել Անգլիայի մասին, ցուցադրելով վերջինիս զավթամոլությունը։ Ինչպես հայտնի է, Ռուսաստանի առաջխաղացումը կասեցնելու համար Անգլիան դիմում էր վճռական քայլերի և իր նավատորմիղը մտցնում Թուրքիայի ջրային տարածությունը, հասնում Պոլիս. «Անդղիական նավատորմիղը վերջապես դտնվեցավ,— ասում է երգիծաբանը։— Կղզիներուն առջև եկեր նստեր է... առաջ գալու կամրշնա կոր։

Ինչո՞ւ եկավ այս նավատորմիղը։

Հանգիստ եղեք, շարություն ընելու համար եկած չէ, բարություն ընելու համար ալ եկած չէ, միմիայն Արևելքի մեջ յուր պատիվը կոտրել շտալու համար եկած է եղեր...» (IV, 271)։

Ասված է պարզ ու որոշակի. Անգլիան ձգտում էր տիրապետող դիրք նվաճել Արևելքում, ուստի և իր նավատորմիղը շարժում է դեպի Իզմիրի ծովածոցը. «Ո՞վ Անդղիա, հպատակներդ պաշտպանելո՞ւ համար ճամփու հանեցիր նավատորմիղդ, թե նավատորմիղիդ համար տեղ մը փնտրելու համար» (IV, 282)։

Բերված տողերից դժվար չէ զդալ հեղինակի խայթող ծաղրը այն երկրի նկատմամբ, որն իր զավթողական ձեռնարկումները աշխատում էր սքողել կեղծ մարդասիրությամբ, «հպատակներին պաշտպանելու» պատրվակով։ Հենց այդպիսին է Անգլիան, որի շահամոլ ու երկդիմի քաղաքականությունը վճռականորեն մերկացրել է Պարոնյանը։ Նա մի առիթով նշել է, որ Անգլիան հաճախ է նավային ցույցով սպառնում Թուրքիային, թեև երբեք չի իրագործում այդ սպառնալիքը։ Ծաղրելով այդ երևույթը՝ սատիրիկն առաջարկում էր ոչ թե նավերը, այլ դրանց լուսանկարները «շրջանակի մեջ անցունելով» ուղարկել Պոլիս, «Բ. դռան մեջ պատե մը կախենք» (IV, 419)։

Նույնպիսի անողոքությամբ Պարոնյանը ծաղրել է բիսմարկյան Գերմանիայի տիրակալական մարմաջը։ Մերկացնելով Բիսմարկի այն հայտարարությունը, թե «Դարդանելն որու ձեռք պիտի մնա», Պարոնյանը գրել է. «Մեր կարծիքը ծուռ, մեր համոզումը սխալ եղեր է. Պիսմարք իշխանին խոսքեն ան կը հասկըցվի, ո՛ր Դարդանելն ալ այս օրերս կնքվեր ու քրիստոնյա է եղեր» (IV, 282)։

Պարոնյանի սատիրայի հարվածներից զերծ չի մնացել նաև ֆրանսիական, իտալական և ուրիշ պետությունների զավթողական քաղաքականությունը։ Նա քննադատական, բացասական վերաբերմունք է ցուցաբերել ցարական Ռուսաստանի, ամերիկյան միսիոներների հանդեպ, որոնք նույնպես որոշակի նպատակներ էին հետապնդում Արևելքում։ Կապիտալիստական պետությունների միջև եղած հակասությունները երբեմն հասնում էին այնպիսի լարման, որ նույնիսկ միմյանց չէին վստահում։ Հատկանշական է հետևյալ երևույթը, որ սրամտորեն ծաղրել է մեր երգիծաբանը։ Հայտնի է, որ Թուրքիան պաշտպանելու պատրվակով ակտիվորեն գործում էին Անգլիան և Ռուսաստանը. մեկն իր նավատորմիղով, մյուսն իր զորքով եկել կանգնել էին իրար դեմ առ դեմ։ Եվ ահա հարկավոր է հեռանալ, բայց ոչ մեկը ետ չի քաշվում՝ հավատ չընծայելով մյուսին. «Զարմանալի բան... ճաթելո՞ւ բան... անոթի մնալու բան ...,— ասում է Պարոնյանը,— առաջ Կ. Պոլիս մտնելու համար կռիվ կընեին, հիմա ալ ելնելու համար» (IV, 275)։

Եվ սա բնորոշ է զավթողական նպատակներ հետապնդող մեծ պետություններին, որոնց դիվանագիտական հաշիվների մեջ թույլ ու փոքրաքանակ ժողովուրդներն օգտագործվում էին սոսկ որպես մանրադրամ։

Դրանում համոզվելու համար բավական է հիշել Հայկական հարցի նկատմամբ եվրոպական պետությունների բռնած դիրքը, որը նույնպես հետևողականորեն քննադատել է Պարոնյանը։ Նա ոչ մի հույս չէր կապում

Բեռլինի կոնգրեսի հետ և ցավով նշում էր նրա բերած «օգուտը» հայ ժողովրդին։ «Եթե այս օգուտներուն երևակայականը մեկդի նետելով իրականին դառնանք,— գրել է երգիծաբանը 1879 թ. նոյեմբերին,—սա օգուտը կը գտնենք, որ առաջ գավառներու մեջ եթե տարին հարյուր հոգի կսպանվեին՝ այսօր հազար կսպանվին և այս ալ մեծ օգուտ է անշուշտ» (II, 56)։

Պարոնյանի խորին համոզմամբ «եվրոպայեն բարիք հուսալը պարապ բան է...» (IV, 467)։ Ուստի նա զդաստացնում էր այն միամիտ մարդկանց, որոնք մեծ հույսեր էին կապում Եվրոպական պետությունների խոստումների հետ և կարծում էին, թե նրանք կօգնեն արևմտահայերին՝ սուլթանական լծից ազատագրվելու համար։ Զո՞ւր հույսեր։ Այդ պետությունների դեսպանները, Պարոնյանի վկայությամբ, հաճախ Պոլսում գումարում էին նիստեր կամ ինչպես հայտնի էին՝ դեսպանաժողովներ, որոնք երգիծաբանի հավաստմամբ ոչ մի լավ բան չէին խոստանում հայ ժողովրդին։ Դեսպաններից «յուրաքանչյուրն յուր շահուն վրա խոսեցավ» (IV, 74),— ասում է Պարոնյանը և ամենայն խստությամբ մտրակում այդ դեսպանաժողովները։ Նա նշում է, որ դեսպանաժողովը մինչև հիմա թեև ունեցել է վեց նիստ, բայց «մեկ նիստ չարժեր»,որովհետև զբաղված է դատարկախոսությամբ։

Դա բնորոշ է շաղակրատանքի մեջ մարզված դեսպաններին, որոնք երգիծաբանի ասելով՝ «...հայկական խնդրույն վրա միշտ կը խորհրդակցին, բայց արդյունքը դեռ հայտնի չէ» (IV, 419)։

Եվ դա հասկանալի է, քանի որ դեսպանները Հայկական հարցը շահարկում էին իրենց հաշիվները կարգավորելու համար։ Ահա թե ինչու, երբ հարց է գրվում, թե «դեսպանախորհուրդը ո՞ւր պիտի գումարել», ո՞ր երկրում, որ «Արևելյան խնդիրեն շահ չունենա», Պարոնյանը հեգնորեն պատասխանում է. «Հայաստանին մեջ գումարեն թող, որ առայժմ բնավ շահ մը չունենալեն զատ բավական վնաս ալ տեսավ» (IV, 281)։

Այսպիսով, մեծ երգիծաբանը հեռատեսորեն մերկացրել է եվրոպական տերությունների խարդախ քաղաքականությունն ու դիվանագիտական խաղերը հայ ժողովրդի ճակատագրի նկատմամբ։ Նա ցույց է տվել, որ չպետք է հավատալ նրանց խոստումներին, փարիսեցիական վերաբերմունքին, կեղծ հայասիրությանը։

ВЕЛИКИЙ АРМЯНСКИЙ САТИРИК

(К 100-летию со дня смерти Акопа Пароняна)

Г. А. САРКИСЯН

Резюме

А. Паронян (1843—1891) по праву считается непревзойденным мастером армянской сатиры Он обогатил родную литературу величайшими произведениями и занял достойное место в ряду лучших сатириков мира. В начале статьи анализируются произведения социальной сатиры А. Пароняна («Дядя Багдасар», «Национальные столпы», «Высокочтимые попрошайки»), а затем подробно исследуется его политическая сатира. В таких произведениях как «Щипки» и «Дневник Ососа» стрелы политической сатиры А. Пароняна поражают не только высшие слои армянского общества и его идеологов. Основная критика направлена па внутреннюю и внешнюю политику султанской Турции, разоблачаются ее дипломатические игры с западно-европейскими державами.